Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ 1909 Թ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՑ ՀԵՏՈ (Զ. ԵՍԱՅԱՆԻ ԵՎ Ա. ԹԵՈԴԻԿԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Աննա Ալեքսանյան

19-րդ դարում հայ իրականության մեջ սկիզբ առավ կանանց շարժումը, և արդեն իսկ դարի կեսին հայ կինն ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում: Կանանց ջանքերով հիմնվում էին դպրոցներ, որբանոցներ, աղքատանոցներ, կազմակերպվում էին բազմաթիվ միջոցառումներ, հանգանակություններ, իսկ հավաքված նվիրատվություններով լուծվում էին համայնքում առկա խնդիրները: 1890-ական թվականներին Աբդուլ Համիդ II-ի օրոք կազմակերպված հայերի զանգվածային կոտորածների պատճառով միաժամանակ այդ ակտիվությունը որոշակիորեն նվազեց:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը մեծ ոգևորություն առաջացրեց արևմտահայ հասարակության մեջ: Կանանց կողմից ձևավորված կազմակերպությունները սկսեցին վերակազմավորվել, հիմնադրվեցին նորերը: Դրանց թիվը կտրուկ աճեց հատկապես 1909 թ., որը պայմանավորված էր Ադանայի արյունալի դեպքերով: Այդ նորաստեղծ կազմակերպությունները բարեգործական և նպաստամատույց բնույթ ունեին և հիմնականում ծավալում էին աղքատախնամ, այրիախնամ և որբախնամ գործունեություն,[1] ինչպես նաև զբաղվում էին կանանց կրթության և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման գործով: Այս հանգամանքը գրեթե կենսական նշանակություն է ունեցել 1909 թ. կիլիկիահայության կոտորածներից հետո աղետյալներին օգնելու և հայկական համայնքի կյանքը վերակազմավորելու հարցում: Այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսին որբերի ու այրիների խնդիրն էր, հիմնականում ծանրացած էր մի շարք կանանց կազմակերպությունների և մի քանի անհատ կին գործիչների ուսերին, որոնք անգնահատելի աշխատանք տարան հայ աղետյալներին օգնելու համար: Այսօր նրանց անձնական արխիվներում, տպագիր և անտիպ նյութերում բազմաթիվ տեղեկություններ կարելի է գտնել դարասկզբին Ադանայում և հարակից շրջաններում տեղի ունեցած ողբերգության և նրան հաջորդող ժամանակաշրջանի վերաբերյալ, որոնք կարևոր աղբյուր են հանդիսանում 1909 թ. կիլիկյան դեպքերն ուսումնասիրելու համար:

Եթե համիդյան կոտորածների ժամանակ հայերը հնարավորություն չունեին օգնելու ջարդերից տուժած և փրկված իրենց հայրենակիցներին, ապա 1909 թ. Ադանայի դեպքերից հետո թուրքական կառավարությունն ընձեռել էր այդ հնարավորությունը և ուղղակիորեն մասնակցում էր օգնության գործին՝ թերևս այս կերպ փորձելով կոծկել տեղի ունեցած հանցագործության մեջ իր սեփական մեղսակցությունը. «Երբ Կիլիկեան ահաւոր դէպքը տեղի ունեցաւ,- նշում է ժամանակակիցը,- երբ շատեր տունէ, ինչքէ զրկուեցան, չորաբեկ հացի կարօտ մնացին, վրաններու տակը՝ չոր գետնի, հողի ու մոխրի վրայ նստան, սահմանադրական կառավարութիւնը մէկ կողմէն, ամբողջ Պոլսոյ ու արտասահմանի հայու-

1 1909 թ. հիմնադրվել է «Հայ կանանց միությունը»՝ Կիլիկիայի աղետից հետո վերապրողներին օգնելու նպատակով: «Հայ տիկնանց միությունը», որը կազմավորվել էր Ֆերիգյուղի «Տիկնանց» և Բերայի «Աշխատանքի տան» որոշ անդամների միավորումով, դարձյալ այդ նպատակն ուներ: Բացի հագուստ և դրամ տրամադրելուց, նրանք Օրթագյուղում հիմնում են որբանոց, որտեղ կրթում և դաստիարակում են հայ որբուհիներին: Գատրգյուղում հիմնադրված «Տիկնանց միությունը» հանգանակություն էր իրականացնում Ադանայի որբերի համար: «Հայ կիներու միության» կամ «Պոլսո հայ տիկնանց միության» անդամները շրջում էին տնետուն, հավաքում հագուստ ու անհրաժեշտ պիտույքներ: Այս կազմակերպությունները Ադանայի որբուհիների համար բացում են նաև որբանոց-արհեստանոց:

թիւնը, Հ. Բ. Միութիւնը միւս կողմէն՝ նպաստներ ու օգնութիւններ հասցուցին...»[2]: Անդրադառնալով այս հարցին՝ Զապել Եսայանը[3] նշում էր, որ «...Ադանայի կոտորածները միակ առաւելութիւն մը ունէին Համիտեան կոտորածներուն վրայ. այն էր, որ անձամբ կարողացանք այցելել աղէտավայրը և ոչ միայն օգնութեան հասնիլ արկածեալներուն, այլ նաեւ գրել տաժանալի տպաւորութիւնները»:[4]

1909 թ. Ադանայի կոտորածներից հետո Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը և Ազգային պատվիրակությունը համատեղ Կարմիր խաչի հանձնաժողով ուղարկեցին Կիլիկիա, որը պետք է տեղում կազմակերպեր աղետյալների և որբերին ցուցաբերվող օգնությունը:[5] Հակոբ Թերզյանի խոսքով՝ «Նպաստներու գործին հսկելու պաշտօնով Ատանա հասան՝ Տիկին Զապել Եսայեան, Տիկին Արշակուհի Թէոդիկ,[6] Օր. Սաթենիկ Օհանջանեան,[7] որ կատարեալ անձնուիրութեամբ աշխատեցան սփոփել աղէտեալներու ցաւերը, աղէտավայրերն այցելելով աղէտեալները մխիթարեցին եւ գրական ու բանաստեղծական գեղեցիկ էջեր նուիրեցին աղէտին ողբալի յիշատակին»:[8]

«Ազգանվեր հայուհյաց ընկերությունն»[9] (հետայսու՝ «Ազգանվեր») իր հիմնադրման առաջին օրվանից ուշադրություն է դարձրել Կիլիկիային, որտեղ չնայած հոծ հայկական բնակչություն կար, սակայն տեղի հայերը հիմնականում խոսում էին թուրքերեն, արաբերեն, քրդերեն և գրեթե չէին տիրապետում իրենց մայրենի լեզվին: «Ազգանվերը», չնայած իր ունեցած սուղ միջոցներին, տեղում կարողացել էր կազմակերպել հայ աղջիկների մայրենի կրթությունը, որը տվել էր իր արդյունքները:[10] Զապել Եսայանը, անդրադառնալով Կիլիկիայում հանդիպած դժվարություններին, իր հոդվածներից մեկում գրում է, որ դժբախտաբար Ադանայում մարդիկ չէին խոսում իրենց մայրենի լեզվով, և նրանց հնարավոր էր հասկանալ միայն այն դեպքում, երբ վերջիններս խոսում էին «թշնամու լեզվով»: Նա

2 Ներսէս Եպսկ. Դանիէլեան (Սսական Վարդապ.), Կաթիլ մը ջուր այրած սրտերու, Կ.Պոլիս, 1912, էջ 56:

3 Եսայան Զապելը (Հովհաննիսյան) ծնվել է Կ. Պոլսում 1878 թ.: Նախնական կրթությունը ստացել է տեղի Սբ. Խաչ նախակրթարանում, որից հետո 1895 թ. մեկնել է Փարիզ, որտեղ ավարտել է Սորբոնի համալսարանը: 1908 թ. Եսայանը վերադարձել է Օսմանյան կայսրություն և մինչև 1914 թ. այստեղ ծավալել գրական, հասարակական-քաղաքական բուռն գործունեություն:

4 Գրական Երեկոներ. Թրքահայ ժամանակակից գրողներ (դասախոսություն Զապել Եսայանի), Թիֆլիս, 1916, էջ 35:

5 Եղիայեան Բ., Ատանայի հայոց պատմութիւն, Անթիլիաս-Լիբանան, 1970, էջ 255: Ներսէս Եպսկ. Դանիէլեան, նշվ. աշխ. էջ 57:

6 Հասարակական գործիչ, մանկավարժ, հրապարակախոս և թարգմանիչ Արշակուհի Թեոդիկը (Ճեզվեճյան) ծնվել է Կ.Պոլսում, նախնական կրթությունը ստացել է Սամաթիայի Նունյան-Վարդուհյան վարժարանում: 1895 թ. մեկնել է Անգլիա՝ բարձրագույն դպրոցում սովորելու, ապա մեկնել է Փարիզ՝ շարունակելու ուսումն այնտեղ: 1898 թ. վերադարձել է Պոլիս և զբաղվել հասարակական գործունեությամբ՝ երկար տարիներ հանդիսանալով «Ազգանվեր հայուհյաց կազմակերպության» նվիրյալներից մեկը:

7 Սաթենիկ Օհանջանյանը ծնվել է 1880-ական թթ.: Նա Հայաստանի առաջին հանրապետության վարչապետ Համո Օհանջանյանի քույրն էր: Սովորել էր Թիֆլիսի ռուսական գիմնազիայում: Նա ան-դամակցել Հ.Յ.Դ.-ին, հանդիսացել նաև Թիֆլիսի «Մեղու» ընկերության վարչության քարտուղարը: 1908 թ., երբ Դաշնակցությունը հալածվում էր Կովկասում, տեղափոխվել է Պոլիս և իր գործունեությունը շարունակել այնտեղ: Սաթենիկը եղել է Պոլսի կանանց Կարմիր խաչի և Աշխատանքի տան հիմնադիրներից: Տե՛ս Ս. Զեյթլյան, «Հայ կնոջ դերը հայ հեղափոխական շարժման մեջ», Լոս Անջելես, 1992, էջ 147-149; Zabel Essayan, Le Rôle de la femme Arménienne pandant la guerre, Revue des etudes Arméniennes, T. II, Paris, 1922, p. 134:

8 Թէրզեան Յ. Յակոբ, Կիլիկիոյ Աղէտը, Կ. Պոլիս, 1912, էջ 151:

9 Տե՛ս Ադանալյան Մ. Լ., Ազգանվեր հայուհյաց ընկերությունը, Պատմա-բանասիրական հանդես, 1979, թիվ 4, էջ 255-259:

10 Victoria Rowe. Cilicia: The View From The Constantinople Women's Organizations, (Armenian Cilicia; ed. by R. G. Hovannisian and S. Payaslian), California, 2008, p. 375.

նշում է, որ միայն կանանցից կարելի էր լսել մայրենի լեզուն, և որ հիմնականում իգական սեռի ներկայացուցիչներն էին տիրապետում հայերենին: Զապել Եսայանի այն հարցին, թե ինչպես է պատահել, որ վերջիններս չեն կորցրել իրենց մայրենի լեզուն, ստանում է հետևյալ պատասխանը. «մենք դեռ երեխայ էինք, երբ Ազգանվուէր հայուհեացն ուսուցչուհի ուղարկեց մեզ մօտ եւ մենք չմոռցանք մեր մայրենի լեզուն»: «Այսպիսով,- եզրափակում է Եսայանը,- Ազգանուէր հայուհեացն էր լոյսի շողը»:[11]

1909 թ. ապրիլյան եղեռնից հետո «Ազգանվերն» իր ամբողջ ջանքերն ուղղեց դեպի Կիլիկիա՝ աղետից փրկվածներին օգնելու: Ընկերության անդամները շփոթահար էին, նորակազմ ընկերությունը դրամական բավական սուղ վիճակի մեջ էր: Արշակուհի Թեոդիկն առաջարկում է Սիպիլին (Ազգանվերի ատենապետ) ընկերության կողմից իրեն գործուղել Կիլիկիա: Սիպիլն այդ առաջարկն իրենց ունեցած միջոցներով անիրագործելի է համարում: Արշակուհին, դիմելով մի շոգենավային ընկերության, ձեռք է բերում անվճար տոմս և մեկնում՝ գրպանում ունենալով ընկերության ընդամենը 30 ոսկին:[12] «Հայուհեաց ընկերութեան կողմէ այս չորեքշաբթի մայրաքաղաքէս Մերսին կը մեկնի Տիկին Ա. Թէոդիկ՝ որբանոցներ բանալու համար...»:[13] Ադանայում Արշակուհի Թեոդիկը հիմնում է որբանոց, և ընկերության համար ներկայացուցիչ գտնելով, վերադառնում Կ.Պոլիս: Նրան հաջողվել էր տեղեկություններ հավաքել Կիլիկիայի բոլոր վարժարանների վերաբերյալ, որոնց հիման վրա կատարվեցին համապատասխան մասնագետների գործուղումներ:[14] Ընկերությունն իր խնամքի տակ էր առել Մարաշի, Դյորթ Յոլի, Այնթապի, Հասան Բեյլիի, Հաճընի որբանոցների վարժարանները և նրանց համար դասագրքեր, գրենական պիտույքներ և ձեռագործի նյութեր էր մատակարարում:[15]

1909 թ. դեպքերից հետո Ազգանվերը շարունակում էր հայկական դպրոցներ բացելու իր առաքելությունը: Այդ ժամանակաշրջանում դա կենսական նշանակություն ուներ հայերի համար, քանի որ պետական և օտարների բացած որբանոցներում հայերեն չէր ուսուցանվում: Այս հանգամանքը կարող էր կործանարար դառնալ հատկապես հայ որբերի ազգային ինքնության հարցում: «Բանանք դպրոցներ, որպէս զի անոնք չխորթանան մենէ, որպէս զի օր մը վերմակի մը կամ անկողինի մը համար այլադաւան կրօնամոլ մարդոսին չյանձնեն իրենց մարդկային արժանապատուութիւնը. բանանք դպրոցներ, որպէս զի սիրեն անոնք իրենց լեզուն, իրենց ցեղն...»:[16]

Ա. Թեոդիկը կարողացել է նաև ամայացած Կիլիկիայում տեսածն ու վերապրածը հրատարակել «Ամիս մը ի Կիլիկիա» գրքում:[17] Պետք է նշել, որ նրանից առաջ և հետո շատ քչերին է հաջողվել նման սարսափներն այդքան զուսպ ու սառնասիրտ ներկայացնել: Ընթերցողին մասնակից դարձնելով իրադարձությունների վերլուծությանը՝ նա փորձում է իր սեփական գնահատականները տալ կատարվածին, մատնանշել մեղավորներին, արդարացնել անմեղներին և բարձրացնել ժամանակը բնորոշող ամենատարբեր խնդիրներ: Օրինակ ոճրագործության մեղավորների շարքում նա նշում է Ադանայի «Իթիդալ» թերթի խմբագիր Իսսան Ֆիքրիին, որը հակահայկական քարոզչություն էր ծավալել Ադանայում

11 Եսայան Զապել, Հայ կնոջ դերը իր կազմակերպած ընկերութեանց մէջ, «Արագած», 29 յունիս, 1911, էջ 83:

12 Հարությունյան Ա., Երևելի տիկնանց դարը: Հայ կանանց հասարակական գործունեությունը 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին, Եր., 2005, էջ 40:

13 «Ժամանակ», 1909, թիվ 305, էջ 3:

14 Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 54:

15 Ազգանուեր Հայուհեաց Ընկերութիւն, Երկամեայ Տեղեկագիր (1910-1912), Պոլիս, 1914, էջ 42-44:

16 Թէոդիկ Արշակուհի, Ամիս մը՝ ի Կիլիկիա. Կցկտուր Նօթեր, Կ. Պոլիս, 1910, էջ 77:

17 Տե՛ս Թէոդիկ Արշակուհի, Ամիս մը՝ ի Կիլիկիա. Կցկտուր Նօթեր, Կ. Պոլիս, 1910:

և թուրքերին կոչ էր անում կոտորել ապստամբության պատրաստվող և «Թուրքիայի մասնատումը երազող գյավուրներին»:[18] Նրա մասին Արշակուհին գրում է. «Հրազէն ու դաշոյն ապահովաբար այնչափ աւէր չէին սփռած հոս, որչափ այդ մարդուն գրիչը: Ֆիքրի իմ աչքիս՝ տխրանուն հեղինակն էր Կոտորածին...»:[19] Արշակուհին հարազատորեն է վերարտադրում Միսիսում,[20] Չորք Մարզվանում[21] (Դեորթ-Յոլ) և Հայգյուղում[22] (Կյավուր Քյոյ) հայերի կազմակերպած ինքնապաշտպանական դրվագները՝ վերջինն անգամ անվանելով դյուցազնական:[23]

Ջարդերից հետո հայերի զանգվածային բանտարկություններ էին եղել, և հարյուրավոր անմեղ հայեր թուրքական բանտերում հայտնվել էին չափազանց ծանր դրության մեջ: «Ազգանվեր հայուհյացն»՝ ի դեմ Ա. Թեոդիկի, զբաղվում էր նաև նրանց խնդիրներով և շատ հաճախ վերջիններիս օգնելու համար վտանգում էր անգամ սեփական կյանքը:[24] Ընդհանրապես այդ շրջանում հայ կանանց գործունեությունը կարծես դուրս լիներ թուրքական իշխանությունների ուշադրությունից, ինչը չի կարելի ասել տղամարդկանց պարագայում: Նրանք հայ կանանց գործունեությունը դիտում էին որպես ապաքաղաքական ակտիվություն և չէին խանգարում նրանց գործունեությանը: Այս հանգամանքն օգնում էր կանանց ավելի լայն գործունեություն ծավալել Կիլիկիայում և օգնել թե՛ որբերին, թե՛ բանտարկյալներին: Նրանց երբեմն հաջողվում էր անգամ ազդել կառավարության որոշումների վրա: Այս հանգամանքը զարմացրել էր իրադարձությունների անմիջական մասնակից Զապել Եսայանին, ով ամուսնուն գրած նամակներից մեկում այս կապակցությամբ նշում է. «... ասիկա զարմանալի կը թուի քեզի, բայց իրականութիւնը այն է, որ ես և օրիորդ Սաթենիկը միայն կըմտնանք ամէն տեղ, կ'երթանք մինչեւ իրենց մօտ (խոսքը բանտարկյալների մասին է.-Ա.Ա.). իրենց խնդիրքները կը ներկայացնենք ուր որ հարկ է. մէկ խօսքով իրենց անհրաժեշտ պէտք ենք. նախապէս իմանալով իրենց մասին եղած տրամադրութիւնները, երբեմն յաջողած ենք փոխել զանոնք»:[25]

Հայ կանանց նախնառաջ անհանգստացնում էր որբերի խնդիրը: Հայությունը կանգնած էր նրանց կորցնելու մեծ վտանգի առաջ: Զապել Եսայանը, որն իր ողջ կյանքը նվիրել է Կիլիկիայի հայ որբերին,[26] մեծ ցավով էր անդրադառնում այս խնդրին՝ շատ լավ հասկանալով, որ ոչ օտար որբանոցները և ոչ էլ պետական «Օսմանյան որբանոցն» ապահով չէին կարող լինել հայ որբերի համար: Նախորդ փորձը ցույց էր տվել, որ միայն լավ կազմակերպված ազգային որբանոցը կարող էր հայ պահել հայ որբուկներին:[27] Հայ որբերին ազգային որբանոցում պահելու և օտար որբանոցներում հայերենի դասավանդման պայքարը հիմնականում ծանրացած էր հայ կանանց ուսերին: Զապել Եսայանը, ում Պոլսի Հայոց պատրիարքարանը լիազորել էր որպես որբերի հարցերով գլխավոր տեսուչի, բանակցություններ էր վարում թուրք պաշտոնյաների հետ որբանոցներում հայերենի դասավանդման համար: Այս կապակցությամբ նա իր ամուսնուն գրում է. «Սիրելի Տիգրան, ... Կուսակալին հետ կուրծք-կուրծքի պայքար մը ունեցանք որբանոցի պաշտօնական լեզուի մասին. ախ սա քու ժեն թուրքերդ, մանաւանդ իթթիհատականներդ խէրը տեսնաս. շատ լաւ, սքանչելի մարդ մըն է, բայց...»:[28]

Ադանայի ջարդերի տարաբնույթ ուսումնասիրությանը նպաստում է նաև Զ. Եսայանի նամակների վերլուծությունը, քանի որ դրանք, վերարտադրելով Կիլիկիայի իրադարձությունները, պահպանել էին փաստական հավաստիությունը: Այդ նամակները կարելի է բաժանել երկու մասի՝ պաշտոնական նամակներ, որոնք նա ի պաշտոնե ուղարկում էր ժամանակի հայտնի հասարակական, կրոնական ու քաղաքական գործիչների, և անձնական նամակներ, որոնք նա ուղարկում էր իր հարազատներին ու մտերիմներին: Այս նամակներն արժեքավոր աղբյուր են մի կողմից այդ ժամանակաշրջանի հայ հանրության, մասնավորապես մտավորական շրջաններում տիրապետող հոգեբանությանը, տրամադրություններին ծանոթանալու, տվյալ ժամանակի իրադարձություններին իր տված անաչառ գնահատականներն ուսումնասիրելու համար, իսկ մյուս կողմից՝ վավերագրական փաստեր են պարունակում, որոնք նույնպես անչափ կարևոր են: Զ. Եսայանը Կիլիկիայից նամակներ էր ուղարկում ամուսնուն՝ Տիգրան Եսայանին՝ մանրամասն նկարագրելով իր տեսածն ու վերապրածը, կրած նեղությունները, գանգատն ու գոհունակությունը: Զապել Եսայանի ֆոնդում[29] ութ նամակ է պահպանվել, որոնք բացառապես վերաբերում են Ադանայի դեպքերին: Նամակները գրված են անմիջապես Կիլիկիայից, և հիմնական հասցեատերը նրա ամուսինն է՝ Տիգրան Եսայանը:

Այսպես՝

«Տիգրան Եսայեանին, 1909, յունիսի 18 (1), հինգշաբթի, Մերսին

Սիրելի Տիգրանս,

...ինչքան ալ պատրաստուած ըլլայի ահռելի աղէտին, ինչքան ալ կարծէի թէ չափազանցութիւններ եղած են արդեն պատմած լուրերուն մէջ, տեսածս այնպիսի ահաւոր բան մըն է, որ ամէն մի երեւակայութենէ վեր է. ոչ մէկ կերպով գաղափար մը չէի կրնար ունենալ, մինչեւ որ աչքերովնիդ չտեսնաք եղածը. ամբողջ վիլայեթ մը կործանուած է. ողջ մնացող և հոս ապաստանողները այնքան բարոյալքուած են, որ եթէ բնական պէտքերու անմիջական դրդումը չըլլայ, իրենք ալ պիտի մեռնեն յուսահատութենէն. ոչ մէկ յոյս, ոչ մէկ ապագայի նշոյլ ... մահ, աւերակ, անօթութիւն, հիվանդութիւն և բանտ ... երկիրը մտած միջոցնիս առաջին տպաւորութիւնս այն է, որ մեռելի տուն կըմտնամ կոր. այն ալ դեռ չթաղուած, թարմ մեռելի տուն ... Կիլիկիան կործանուած է ... այս է ամէնուն տպաւորութիւնը, դեռ Ատանա չեմ գացած, բայց հիմակուանէ լսածներս և ինծէ պատմածները կը վկայեն, որ բոլորովին զոհուած են հայերը յայտնի և նախապատրաստուած ծրագրով. արդէն յայտնի է. թուրքերը հոս այն երևոյթը ունին, ինչ որ ունէին հին ռեժիմի գէշ օրերուն մէջ Պոլսոյ մէջ և բան մըն ալ աւելի. երեսդ կը նային զարմացումով, իբր թէ հարցունէին, թէ ինչպէ՞ս կըլլայ, որ ողջ մնացած ես. յատկանշական կէտ. երբ Պոլսէն եւ ուրիշ տեղերէ հայ անհատներ եկեր են, որոնք թալանէ և կոտորածէ փախածի երևոյթ չունին և կը նմանին արտաքին երևոյթով իրենց էֆենտիներուն, թուրք ամբոխը զարմացեր է և ոմանք յայտներ են, թէ խաբուած կ'զգան ինքզինքնին, քանի որ ուրիշ տեղեր հայերը ողջ մնացած են: Արդի կառավարության մեղսակցութիւնն ակնյայտ է:

18 Համբարյան Ա. Ս., Կիլիկիայի 1909 թ. հայկական կոտորածները, Պատմա-բանասիրական հանդես, թիվ 4, Եր., 1988, էջ 14:

19 Թէոդիկ Արշակուհի, նշվ. աշխ., էջ 106:

20 Նույն տեղում, էջ 131-137:

21 Նույն տեղում, էջ 168-193:

22 Նույն տեղում, էջ 110-117:

23 Նույն տեղում, էջ 114:

24 Նույն տեղում, էջ 149-160:

25 Զապել Եսայան, Նամակներ, Եր., 1977, էջ 99:

26 Տե՛ս Ազատեան Լ., Հայ որբերը Մեծ եղեռնի, գիրք երրորդ, Լոս Անճելըս, 2002, էջ 83-84:

27 1890-ական թթ. համիդյան ջարդերից հետո հայ որբերի ճակատագիրն այդպես էլ անհայտ մնաց, քանի որ նրանք հիմնականում Օսմանյան պետության խնամքի տակ էին և թուրքական դաստիարակություն էին ստանում:

28 Եսայան Զապել, Նամակներ, էջ 107:

29 Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի ֆոնդեր, Զապել Եսայանի ֆոնդ, համ. 230-236, 245-250:

Ուրիշ կէտ մը. միշտ կարծուած է, թէ լեզուի ու բարքերու նոյնութիւնը համերաշխութիւն յառաջ կրնան բերել ցեղերու մէջ. հոս հայ մը թուրքէն կարելի չէ զանազանել. նոյն դիմագծութիւնը ունին, նոյն շեշտը ունին, նոյն բարքերը ունին գրեթէ. կլիմային տիրական ազդեցութիւնը արտաքին երևոյթով և բարքով նոյնացուցեր է զիրենք. բայց դարձեալ ջարդ, ավերում և այլն...

Այս նամակս պահէ, օրը օրին տպաւորութիւններս կը ներկայացնեն, կրնան պէտք ըլլալ... եթէ որեւէ կերպով անապահով զգաս ինքզինքդ, յանձնէ Bareille-ին ներփակեալ»:[30] Այս նամակը նա գրել է դեռևս Ադանա չհասած, բայց ինչպես երևում է բովանդակությունից, նրա մոտ արդեն ձևավորված կարծիք կար կատարվածի, մեղավորների և կազմակերպիչների հարցում: Նա պարզապես տեղի ունեցածի պատճառների փնտրտուքի մեջ էր: Ավելի ուշ, երբ արդեն եղել էր Կիլիկիայի բոլոր աղետավայրերում, մանրամասն ամուսնուն նկարագրում է իր բոլոր հոգսերն ու մտատանջումներն՝ անդրադառնալով գրեթե բոլոր հրատապ հարցերին: Այսպես՝

«Տիգրան Եսաեանին, 1909 թ., սեպտեմբեր, Մերսին

Սիրելի Տիգրանս, Երկար ճամբորդութենէ մը ետքը, տաժանալի տպաւորութիւններով բեռնաւորուած՝ ողջ, առողջ հասայ Մերսին, անցնելէ ետքը հասանք Սիս, երեք օր մնացինք հոն, հետո ճամբայ ելանք, հասանք Ղարս-Բազար, ...Գիշեր մը, մնացինք հոն և հետեւեալ օրը հասանք Օսմանիէ: Հոս ժողովուրդը խոհեմութեամբ շարժելուն ու իր աղաներուն ինչպես քահանաներուն խօսքին անսալուն հիմնայատակ կործանուած է. Օսմանիէ ընդարձակ տեղ է, աւերակները վերջ չունին, 3 տուն միայն ազատուած են, 800 հոգի հրացանով, սրով, ինչպես նաև կացնով սպանուած է ու 200 հոգի այրած է եկեղեցիին մէջ: Այս թվերը վավերական չեն և նվազագույն չափը կը նշանակեն: Սարսափելի գիշեր մը անցուցինք հոս տան մը մէջ, ուր 25 արկածեալ ընտանիք պատսպարած է: Հետեւեալ առտուն արշալոյսին ճամբա ելանք, հասանք Էրզին, ուր նպաստ բաշխելու պատրուակով տեսանք մեր բանտարկեալները, տեսանք նաև այն 5 հայերը, որ կախաղանի դատապարտուած են և որոնց մեջ 14 տարեկան պատանի մը կայ»:[31]

Կիլիկիայի աղետին շատերն են անդրադարձել: Գրվել են տարաբնույթ բազմաթիվ գործեր, սակայն դրանց շարքում առանձնանում են հատկապես Զապել Եսայանի գործերը: Հետագայում Զապել Եսայանը Ադանայից իր բոլոր տպավորությունները ներկայացրել է առանձին գրքում և 1911 թ. Կ. Պոլսում հրատարակել իր նշանավոր «Ավերակներուն մեջ» աշխատությունը, որն այդ ժամանակաշրջանում Ադանայի դեպքերին նվիրված ամենակարևոր սկզբնաղբյուրներից մեկն է:

Կիլիկիայի աղետը Զապելն արտացոլել է նաև գեղարվեստական երկերում՝ «Անեծքը»[32] վիպակում, «Սաֆիե»,[33] «Նոր հարսը»[34] պատմվածքներում: Այս ստեղծագործություններում նա փորձում է հակառակ կողմից նայել կատարվածին՝ հիմնականում անդրադառնալով ոճրին մասնակից դարձած թուրքերին և նրանց հետագա ճակատագրին: Նա ամենուր միակ մեղավոր տեսնում էր օսմանյան պետությանը և ոչ կուրորեն նրան հետևող հասարակությանը: «Երեկոեան ժամուն տպաւորութիւններ Ատանայէ» հոդվածը, որը հրապարակվել էր 1911 թ. «Ազատամարտում» նա այսպես է եզրափակում իր խոսքը՝ թողնելով վերլուծությունը միմիայն ընթերցողին. «Հետզհետե կմօտենան... համաչափ ու զինուորական քայլերով գիշերապահ ջոկատ մը կը յառաջանայ աւերակ քաղաքին մէջ... ի զուր կը ճգնիմ տրամաբանել, ի զուր կը ձգտիմ կառչիլ հաշտութեան և խաղաղութեան խոստումներու... : Այդ քայլերուն աղմուկին մէջ հոգիս, ուր այդ պահուն ապաստանած են բոլոր արկածեալներու ոխերն ու տառապանքը, հոգիս կը կարծէ լսել դարաւոր թշնամիին յառաջխաղացութիւնը... այդ քայլերու աղմուկը աւերակ և հրդեհուած քաղաքին մէջ...»:[35]

Զապել Եսայանը չդադարեց հոգ տանել Կիլիկիայի հայ որբերի մասին մինչև 1921 թ: 1920 թ. մարտին լիազորվելով Փարիզի Հայկական ազգային պատվիրակության կողմից, նա ժամանեց Կիլիկիա՝ որպես կիլիկյան որբանոցների քննիչ:[36] Նրա առաքելությունը զուգադիպեց թուրքական ազգային շարժման հանդեպ ֆրանսիական քաղաքականության կտրուկ փոփոխությանը: Ֆրանսիացիների և քեմալականների մերձեցումը վտանգի տակ էր դնում Կիլիկիայի հայությանը: 1920 թ. ապրիլի 2-ին Եսայանը համաձայնության է գալիս ֆրանսիացի գնդապետ Բրեմոնի հետ՝ որբերին Կիլիկիայից դուրս բերելու հարցում: 700 որբեր տեղափոխվում են Մերսին: Ֆրանսիական վարչության որոշմամբ այստեղ ստեղծվում է Կիլիկիայի որբանոցների ընդհանուր միություն, որի տնօրինությունը կրկին ստանձնում է Եսայանը: Հունիս ամսին Մերսինում կենտրոնացած որբերի մի մասին տեղափոխում են Կիպրոս, իսկ արդեն 1921 թ. մնացած որբերը հանգրվան են գտնում Սիրիայում և Լիբանանում:[37]

Կիլիկիայի կոտորածների ազդեցության տակ Զ. Եսայանի կրած տառապանքները նրան ուղեկցեցին իր ամբողջ կյանքի ընթացքում:

Այն, ինչ տեղի ունեցավ 1909 թ. Կիլիկիայում, ցնցեց ողջ հայությանը: Հարյուրավոր մարդիկ գալիս էին այդ «ավերի» երկիրը, որպեսզի անձամբ տեսնեն կատարվածը, օգնեն աղետյալներին: Կիլիկիահայությանն օգնելու հարցում հատկապես մեծ էր հայ կանանց դերը: Աղետից հետո Կիլիկիայում նրանց շնորհիվ հիմնվեցին որբանոցներ, բացվեցին դպրոցներ, որտեղ կազմակերպվում էր հայերեն լեզվի ուսուցումը: Այս գործում հատկապես ակտիվ էր «Ազգանվեր հայուհյաց ընկերությունը», որը Կիլիկիայում իր գործունեությունը շարունակեց մինչև Հայոց ցեղասպանության տարիները: Մեծապես դրա շնորհիվ կիլիկիահայ մանուկների և որբերի շրջանում հնարավոր եղավ պահպանել հայ ինքնությունը:

Կիլիկիայի կոտորածներից հետո թուրքական կառավարությունը զանգվածային ձերբակալություններ իրականացրեց հայության շրջանում: Այս բանտարկյալներին օգնելու հարցում հատկապես մեծ էր մի քանի կին գործիչների դերը: Նրանք օգտվելով այն հանգամանքից, որ թուրք պաշտոնյաներն առանձնապես լուրջ չեն վերաբերվում իրենց գործունեությանը, կարողանում էին տեսակցել բանտարկյալներին, օգնություն ցուցաբերել և անգամ կազմակերպել նրանց փախուստը:

Կիլիկիայում գործունեություն ծավալած կին անհատ գործիչներից հատկապես առանձնանում էր Զապել Եսայանը, ով 1909 թ.-ից անհավասար պայքար էր մղում թուրքական իշխանությունների դեմ հայ որբերի ու նրանց ինքնության պահպանման համար:

30 Զարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի ֆոնդեր, Զապել Եսայանի ֆոնդ, համ. 248 (3):
31 Եսայան Զապել, Նամակներ, էջ 103-105:
32 «Ազատամարտ», 1911, թիվ 20, էջ 621-628:
33 «Ազատամարտ», 1911, թիվ 13, էջ 1028-1031 (4-6):
34 «Ազատամարտ», 1911, թիվ 39, (էջ 601-603, 3-5):

35 Եսայան Զապել, Երեկոեան ժամուն տպաւորութիւններ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1910, թիվ 4, էջ (52-56), (4-8); Զարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի ֆոնդեր, Զապել Եսայանի ֆոնդ, համ. 677:
36 Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան: Հտ. 1-ին, 1906-1940; Գահիրէ, 2006, էջ 120:
37 Տե՛ս Ազատեան Լ., նշվ. աշխ., 2002, էջ 84:

Anna Aleksanyan

The Social Activities of the Armenian women in Cilicia after 1909 Massacres. (e.g of Z. Esayan and A. Teodik)

Summary

After 1909 massacres the Ottoman Armenians did their best to help those who suffered during Adana massacres. The Armenian women were also involved in the relief mission to help orphans, widows and prisoners. Many witnesses published voluminous works, articles trying to assess the situation and to find out real organizers and causes of the massacres. In this respect, the works of Zabel Esayan and Arshakuhi Teodik present very important sources as an eyewitness account. The authors refered the Western Armenian women, who played an active role in supporting Cilician Armenians after the disaster. Armenian female activists gave their own appreciation of the situation in their works, memoirs and letters.